

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY



FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department
of Romance and Germanic Philology, Yerevan State University,
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**
Doctor of Philology, professor of Moscow State University,
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**
Doctor of Philology, Institute of English Philology, Munich
University, Germany
- Charles Hall**
PhD, associate professor of Applied Linguistics, University of
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**
Dean of the Department of Romance and Germanic Philology,
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**
Head of Translation Chair,
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

Գլխավոր խմբագիր՝

Մարգարիտա Ապրեսյան

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական
խորհրդի**

Դորա Մաքսյան

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

պատվավոր անդամներ՝

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

Սվետլանա Տեր-Մինասովա

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

Հանս Մաուեր

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի
համալսարան

Չարլզ Հոուլ

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Խմբագրակազմ՝

Մամվել Աբրահամյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Յուրա Գաբրիելյան

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Կարո Կարապետյան

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Ալբերտ Սակարյան

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

Ելենա Միխայրյան

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Համիկ Բաղդասարյան

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Avagyan N., Bagiryan D., Melkonyan R. THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND LEARNING PROCESSES	8
Avetikian M. TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES: TEACHER DEVELOPMENT	18
Абрамян С. ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА	30
Амирян Н. ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ	41
Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д. ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА (НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ)	50
Тер-Саргсян Л. ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА	67
ԱԹՈՅԱՆ Լ. ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ	78

Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 89

Գրիգորյան Շ.
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 101

Մարտիրոսյան Մ.
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 111

Մինասյան Է.
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ
ՄԱՄՈՒԼՈՒՄ 120

Սարգսյան Լ.
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ 134

Ոսկանյան Ա.
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 149

Սարգսյան Լ.
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ 162

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ABSTRACT

NEOLOGISMS IN CONTEMPORARY SPANISH DIGITAL PRESS

The present paper studies the role of neologisms in digital press paying special attention to its language. The latter has its distinctive features which make it possible to describe new concepts, new ideologies as well as news regarding different spheres of life thus demonstrating the vocabulary's capacity for adaptation to new situations and the creative spirit of the journalist. The article also examines the ways of broadening the word meaning through neologisms and the creation of neologisms through the change of grammatical category as well as and their use in the press.

Key words: *neologism, Spanish digital press, the language of press, internet, mass media, language change, information, extension of the word meaning.*

РЕЗЮМЕ

НЕОЛОГИЗМЫ В СОВРЕМЕННОЙ ИСПАНСКОЙ ЦИФРОВОЙ ПРЕССЕ

В данной статье рассматривается роль неологизмов в электронной прессе с уделением особого внимания к стилю языка, который в зависимость от цели имеет свои стилистические особенности. Последние позволяют описать новые концепты жизни, новые идеологии, связанные с любимыми областями, новости, тем самым выявляя способность лексики адаптироваться к новым ситуациям, творческий дух журналиста. В статье приводятся также методы семантического расширения неологизмов, образование неологизмов путем изменений грамматических категорий а также использование в средствах массовой информации.

Ключевые слова: *неологизм, испанская электронная пресса, язык журналистики, интернет, СМИ, изменение языка, информация, семантическое расширение.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության է առնվում նորաբանությունների դերը թվային մամուլում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով վերջինիս լեզվին, որն, ըստ նպատակի գերակայության, ունի իրեն բնորոշ ոճակազմիչ առանձնահատկություններ, որոնց շնորհիվ էլ հնարավորություն է ընձեռում նկարագրել կյանքի նոր հասկացություններ, նոր գաղափարախոսություններ, ցանկացած ասպարեզին առնչվող նորություններ՝ ի ցույց դնելով նոր իրավիճակներին բառապաշարի հարմարման հնարավորությունը և լրագրողի ստեղծագործ ոգին: Հոդվածում ուսումնասիրվում է նաև նորաբանությունների միջոցով բառիմաստի ընդլայնման եղանակները և քերականական կարգի փոփոխման միջոցով նորաբանությունների ստեղծումը և նրանց կիրառումը մամուլում:

Բանալի բառեր՝ *նորաբանություն, իսպանական թվային մամուլ, լրագրության լեզու, համացանց, ՁԼՄ, լեզվական փոփոխություն, տեղեկություն, բառիմաստի ընդլայնում:*

Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ամեն օր զարգացման նոր հեռանկարներ են առաջանում, ի հայտ են գալիս նորանոր երևույթներ, որոնք էլ իրենց հերթին նոր եզրույթների ստեղծման անհրաժեշտություն են առաջացնում: Այսօր զանգվածային լրատվամիջոցների ոլորտը նույնպես զերծ չէ այս նորամուծություններից: XXI դարում ի հայտ է եկել մի երևույթ, որը վտանգում է նույնիսկ հեռուստատեսության, ռադիոյի և տպագիր մամուլի գոյությունը: Խոսքը վերաբերում է «թվային մամուլ» երևույթին կամ ինչպես այն անվանում են թվային աշխարհում՝ «կիբեր» լրագրությանը, որի զարգացման տարածքը համացանցն է: Թվային աշխարհը բավականին ընդգրկուն է և կարող է փոխարինել մյուս բոլոր լրատվամիջոցներին: Լրատվությունը դառնում է թվային այն պահից ի վեր, երբ ներբեռնվում է համացանց:

Խոսելով մամուլի մասին հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել վերջինիս լեզվին, որը Լասարո Կառետերը համարում է հատուկ լեզու՝ համեմատելով այն ընդհանուր լեզվի գրկում գտնվող փոքր կզդու հետ (Domínguez, Font, 1990: 25): Մամուլի կամ լրագրության լեզուն ունի նորմատիվ բնույթ՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով և նրա նպատակն է հասկանալի կերպով ընթերցողին հաղորդել տեղեկատվություն:

Յուրաքանչյուր լրագրողի առաջնահերթ խնդիրն է ներկայացնել սովյալ տեղեկությունը՝ անթերի, ճիշտ շարադասությամբ, հարուստ բառապաշարով՝ չհեռանալով իրական դեպքերից և խուսափելով խոսակցական, ինչպես նաև երկվմաստ արտահայտություններից: Հարկ է չդիմել անհատական մեկնաբանությունների, այլ փորձել լինել անաչառ և ցուցաբերել չեզոք մոտեցում, ինչպես նաև չչարաշահել հապավումների կիրառությունը:

Քանի որ լրատվամիջոցների հիմնական նպատակն է տեղեկություն հաղորդելը, ընթերցողին ուղղորդելը, հետևաբար կիրառված լեզուն, ըստ նպատակի գերակայության, պետք է ունենա իրեն բնորոշ ոճակագմիչ առանձնահատկությունները:

Այսպես օրինակ՝ տեղեկություն հաղորդելիս նպատակահարմար է օգտագործել պարզ և հստակ լեզու, որպեսզի հասկանալի լինի տարբեր կրթական մակարդակի անհատներին: Այս դեպքում շեշտը դրվում է բովանդակության, այլ ոչ թե ձևի վրա:

Ուղղորդելու համար կիրառվում է գրքային լեզու՝ հագեցած հարուստ ձևակերպումներով, եզրերով, քանի որ լրագրողի նպատակն է հաղորդել այնպիսի գաղափարներ, որոնք մի շարք փաստերի վերլուծության հետևանք են:

Ժամանցային ժանրի լեզուն պետք է լինի ոչ պաշտոնական, որն իր հերթին ենթադրում է խոսակցական տարրերի գերակշռություն:

Իսպանական լրագրության մեջ կարող են կիրառվել գործառական տարբեր ոճեր՝ կախված ժանրից.

1. Գրական ոճ- Երբ հեղինակն օգտագործում է պատկերավոր արտահայտություններ՝ փոխաբերություններ, համեմատություններ, կրկնություններ և այլն՝ իր խոսքն ավելի արտահայտիչ, հարուստ և գեղեցիկ դարձնելու նպատակով: Օր.

"Cocinar, hoy en día se transformó en un acto [...]", dice el escritor y especialista Michael Pollan /<http://www.nexofin.com/notas/417092-siete-reglas-de-oro-a-la-hora-de-comer-n/>.

Hasta ahora, el juego de la política internacional se jugaba de la siguiente manera: los políticos hacían declaraciones públicas, [...] pero eran solo una impostura /<https://elrobotpescador.com/2014/11/02/impresionantes-declaraciones-de-putin-hablandole-claro-a-las-elites-occidentales/>.

2. Վարչական կամ քաղաքական ոճ- Այս դեպքում հեղինակը կիրառում է մեղմասություններ, երկար և ճոխ բառեր, որոնք ավելի հնչեղ են դարձնում միտքը: Օր.

Al parecer en la 'carrera' el ladrón se cayó y fracturó una pierna. El 'amigo de lo ajeno' quedó herido frente a la manzana A del barrio La Cima [...] /<http://www.qhuboibague.com/blog/ladron-huyo-y-se-fracturo/>.

Durante 2012, autoridades penitenciarias perdieron o cedieron parte del control de cinco cárceles a los internos Centro de Readaptación Social de Ciudad del Carmen, Campeche; Penitenciaría de Santa Martha Acatitla, DF; [...] /<http://www.animalpolitico.com/2013/11/estados-ceden-internos-el-control-de-5-carceles-en-un-ano/>.

El perdón a quienes han cometido aborto, anunciado ayer por el papa Francisco no es vinculante en materia civil, según organismos de derechos humanos, mientras un grupo impulsa una iniciativa de ley para interrumpir el embarazo /<http://www.elnuevodiario.com.ni/nacionales/369279-perdon-abortos-no-une-posiciones/>.

Es lógico que una nueva etapa vital conlleve unos cambios de comportamiento en los ancianos, se trata de la adaptación a la vejez. [...] La tercera edad no es ninguna excepción, eso sí, posiblemente será la adaptación

más complicada /<http://www.elrincondelcuidador.es/blog/cambios-de-comportamiento-en-ancianos-con-demencia-como-reaccionar/>.

3. Ոչ պաշտոնական կամ խոսակցական ոճ: Այս ոճն իր մեջ համատեղում է լեզվի հաղորդակցման և ներգործման գործառույթները և այս առումով մոտենում գեղարվեստական ոճին: Նշված երկուղղվածությամբ էլ պայմանավորված են խոսակցական ոճի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արտահայտչականությունն ու հուզականությունը, տեսանելիությունն ու պատկերավորությունը, հոմանիշային բազմազանությունն ու հարստությունը, պատկերավորման և արտահայտչական միջոցների հաճախակի գործածությունը, ժողովրդի կողմից ստեղծված արտահայտությունները, որոնք, լինելով խոսակցական, այնուամենայնիվ, գրական խոսքում կիրառելի են (Եզեկյան, 1999: 65): Օր.՝ *dar mucha “papaya” en el banco- ‘robar una fuerte cantidad de dinero dentro de un banco’*;

Recuerde que el mejor antídoto contra los hampones es “no dar papaya”. Por mucha policía que haya en las calles, el principal responsable de su seguridad es usted /<http://www.elespectador.com/noticias/bogota/evitar-le-roben-primera-articulo-497975/>.

Մամուլն այն ոլորտն է, որտեղ լեզվական փոփոխություններ տեղի են ունենում յուրաքանչյուր օր: Ստեղծվում են նոր բառեր՝ բնութագրելու նոր երևույթները կամ պարզապես փոխարինելու հներին, կամ կիրառությունից դուրս եկած բառերը նորովի են մատուցվում հանրության դատին:

Եթե նախկինում լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները դիտվում էին որպես լեզվի աղավաղում, ապա հիմա դրանք համարվում են կենդանի լեզվին հատուկ երևույթներ: Հարկ է նշել նաև, որ լեզվի նորացումը դրական գնահատվելուն զուգահեռ, մի շարք խնդիրներ է առաջացնում հասարակության լայն խավերի շրջանակում՝ հարմարվելու և յուրացնելու տեսանկյունից: Այս մշտապես և արագ տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են գիտության և տեխնիկայի ոլորտի շարունակական առաջխաղացմամբ ու զարգացմամբ, ինչպես

նան հասարակական լրատվամիջոցների ազդեցությամբ, որոնց շնորհիվ էլ լայն կիրառություն ու տարածում են գտնում նորաբանությունները:

Մանուել Ալվարը, ի թիվս մի շարք գիտնականների, որոնք անդրադարձել են մամուլի լեզվում ի հայտ եկող նորաբանությունների ուսումնասիրմանը, առանձնացնում է բառիմաստի ընդլայնման երկու եղանակ՝ փոխաբերություն և իմաստային տեղաշարժ: Որպես մեծ կարևորություն ունեցող երևույթ վերոնշյալ երկու եղանակներին կարելի է հավելել իմաստային պատճենումը:

1. Փոխաբերությունը, ըստ արդի հայերենի բացատրական բառարանի, բառերի կամ դարձվածների գործածությունն է այլբանական առումով՝ նմանության, համեմատության, հարաբերակցության կամ առնչականության հիման վրա (Աղայան, 1976: 15-24): Օր.՝ pinza ինչպես ‘acuerdo entre dos partidos, a la derecha e izquierda de un tercero, para presionarlo’; pelotazo ինչպես ‘enriquecimiento rápido y no totalmente limpio’:

*[...] El expresidente del Gobierno Felipe González ha sido el primero en poner el término sobre la mesa y asegurar que Pedro Sánchez, como él en el 96, está siendo objeto de aquella célebre **pinza** entre la derecha y el que parece será el principal partido de la izquierda, [...] /<http://ecodiario.economista.es/elecciones-2015-20D/noticias/7206781/12/15/Hay-pinza-entre-Rajoy-e-Iglesias-Nuestro-enemigo-es-el-PSOE-nuestro-rival-Ciudadanos.html/>.*

*[...] Yo creo que el aprovechamiento de tecnologías emergentes es clave para la prosperidad y el bienestar. Lo que si quiero es alejar esos conceptos de la avaricia, el **pelotazo** y el rápido enriquecimiento. [...] /<https://glissoire.wordpress.com/2012/10/21/innovacion-superlativa/>.*

Փոխաբերականությունը ունի երկու տարբերակ՝

ա) Լեզվում արդեն առկա եզրույթը իր հիմնական իմաստի փոխաբեն հատուկ ոճում հանդես է գալիս մեկ այլ իմաստով: Նմանատիպ երևույթի օրինակ է իսպաներենի sensibilidades (դյուրազգացություն) բա-

որ, որը ստացել է հատուկ իմաստ քաղաքական լեզվում: Հետևյալ օրինակում տվյալ բառը օգտագործվում է «տարաձայնություն, անհամաձայնություն» իմաստով:

*De hecho, consideran sospechoso que se haya abierto un debate sobre las diferentes **sensibilidades** que hay en la dirección del partido en un momento en el que el PSOE ha decidido renunciar, por el momento, a llegar a un acuerdo con Podemos y las fuerzas de izquierdas para formar un gobierno de progreso, sin Ciudadanos* /<http://www.europapress.es/nacional/noticia-podemos-cierra-filas-niega-divisiones-estrategia-negociaciones-psoe-20160309182649.html/>.

բ) Նոր եզրույթ կարելի է ստանալ՝ պատճենելով մեկ այլ լեզվում առաջացած փոխաբերությունը, ինչպես օրինակ՝ doméstico (անգլերենում՝ domestic), especulación (անգլերենում՝ speculation- ենթադրություն, կասկած) և այլն:

*Las **especulaciones** sobre el hipotético papel que habrían jugado los estupefacientes en su deceso no han dejado de intensificarse desde que el conocido publicista Gary Farrow, [...], dejara entrever este lunes que el "fácil acceso" que tenía George a determinadas sustancias estaría directamente vinculado al fallo cardíaco [...]* /<http://www.elmundo.es/loc/2016/12/27/58626ab7e5fdea1a5c8b45b3.html/>.

2. Իմաստային տեղաշարժը ենթադրում է բառի նոր իմաստի ստեղծում, որը բխում է տվյալ բառի արտահայտած նախնական իմաստից: Սա առաջացնում է լուրջ խնդիրներ, քանզի շատ հաճախ դժվարություն է առաջանում տարբերակել իրական իմաստային տեղաշարժը բառային անճշտությունից: Վերջինիս արդյունքում առաջացել են մի շարք նոր իմաստներ, որոնք ամրագրված են DRAE- ում: Օր.՝ incidir բայը՝ ‘insistir’ իմաստով, puntualizar բայը՝ ‘aclarar, precisar, insistir’ իմաստներով:

*Palacios Boix explica que la mortalidad tras el contagio "oscila entre el 53% y el 90%, según lo debilitado o desnutrido que se encuentre el paciente", y **puntualiza** que quienes sobreviven a la infección las primeras dos semanas*

"*tienen de suyo un mejor pronóstico*" /<http://www.europapress.es/murcia/noticia-colaborador-hospital-mesa-castillo-advierde-facilidad-ebola-puede-acceder-cualquier-pais-20140808133634.html/>.

[...] *En esta situación y con el objetivo de maximizar sus apoyos, la estrategia de los partidos de gobierno debería gravitar en torno a cuatro ejes. Primero, **incidir** en que los indicadores económicos de Galicia son mejores que los del conjunto de España y que, en perspectiva histórica, este diferencial es una novedad* /http://elpais.com/diario/2009/02/16/galicia/1234783090_850215.amp.html/.

3. Իմաստային պատճենումը բառի նոր իմաստ ձեռք բերելու գործընթացն է: Այն ծագում է մեկ այլ լեզվում առկա համարժեք բառից (այս երևույթը նկատվում է հատկապես վատ թարգմանությունների դեպքում): Օր.՝ *abrumador* բառը՝ *‘aplastante’* իմաստով; *agresivo*-ն՝ *‘audaz, emprendedor’* իմաստներով այլն (Salazar, Cabezas, 2002:117-118):

*El PP ha vuelto a ganar las elecciones en Tordesillas (Valladolid), por **abrumadora** mayoría en un municipio que gobierna el PSOE, a pesar de que la Junta de Castilla y León, presidida por el ‘popular’ Juan Vicente Herrera (PP), prohibiera la muerte en público del Toro de la Vega* /<http://www.vozpopuli.com,26.06.2016/>.

*Todos esos avances, dijo Ferreri, deberán ir acompañada de una política de inserción internacional “pragmática y **agresiva** donde el país pueda avanzar, defendiendo sus valores, pero hacia abrir la mayor cantidad de mercados”* /<http://www.elpais.com.uy/economia/noticias/pablo-ferreri-punto-confianza-audacia.html/>.

Ըստ Գլորիա Գեոերո Ռամոսի՝ իմաստային նորաբանության ստեղծման համակարգերից մեկը բառերի քերականական կարգի փոփոխումն է: Կարող են նկատվել փոփոխման տարբեր տիպեր.

ա) նախդրավոր շարույթի վերափոխումը ածականի, օր.՝ *de aumento de salario-salarial, casa de padre- paterna, cama de maderamaderosa, personas sin vergüenza- sinvergüenzas:*

*El rector de la Universidad reclamó un 20% de **aumento salarial** para docentes y funcionarios y fondos para invertir en servicios de Montevideo* /<http://www.elpais.com.uy/informacion/universidad-republica-pretende-aumento-salarial.html/>.

բ) գոյականի ածականացում (սովորաբար գոյական+գոյական կառույցներում, որտեղ երկրորդ գոյականական բաղադրիչը կատարում է ածականի դեր), օր.՝ *coche cama, mueble bar, partido bisagra*:

*Partiendo de cero ha conseguido nueve escaños, arañando votos a derecha e izquierda; se ha convertido en un **partido bisagra** de centro-centro y tiene la llave de la estabilidad en esa región* /http://elpais.com/elpais/2015/03/27/opinion/1427485575_641361.html/.

գ) ածականի մակբայացում, օր.՝ *hablar claro, jugar sucio, pasarlo fatal, caminar rápido, correr lento, atar fuerte, hablar bajo, etc.*

[...] *Hacer contactos para trabajar no es **jugar sucio***. [...] http://economia.elpais.com/economia/2016/09/28/actualidad/1475057329_738767.html/. **Caminar rápido** es la opción ideal para aquellas personas que “*quieren hacer deporte de forma moderada pero no tienen un estado físico óptimo* [...]” /http://elpais.com/elpais/2014/09/17/buenavida/1410948875_792545.html/

դ) գոյականի մակբայացում, օր.՝ *pasarlo bomba, sentirlo horrores, trabajar cantidad, pesar tela*:

*Y finalmente la CSCE, [...], es un organismo tan inoperante que sólo su convocatoria es un insulto a la inteligencia. Conclusión: lo vamos a **pasar bomba*** /http://elpais.com/diario/1994/12/08/internacional/786841219_850215.html/.

ե) ածականի գոյականացում: Այս երևույթը հիմնականում հանդիպում է գոյական +ածական կառույցներում, որտեղ գոյականը զեղչված է: Օր.՝ *Есть **poder ejecutivo** (գործադիր իշխանություն)* բառակապակցության մեջ զեղչվում է *poder* (իշխանություն) բառը, *ejecutivo* (գործադիր) ածականը դառնում է գոյական (Salazar, Cabezas, 2002:119):

Antes de la votación, el actual coordinador de IU de Asturias, Jesús Iglesias, favorable a la entrada en el Gobierno pidió públicamente a los militantes apoyo al acuerdo para dotar de estabilidad las políticas del ejecutivo asturiano /<http://www.elperiodicomediterraneo.com/>.

Նորաբանություններով մասնավորապես հարուստ են սպորտային և մշակութային ոլորտները: Այս երևույթը Խ.Պասկուալը դիտարկում է հետևյալ կերպ. իր միտքն արտահայտելու համար մարդ ստեղծում է նոր բառեր՝ միննույն ժամանակ տվյալ բառին հաղորդելով իմաստային այլ նրբերանգներ /http://cvc.cervantes.es/ensenanza/biblioteca_ele/asele/pdf/14/14_0089.pdf/:/:

Մամուլում հայտնված նորաբանությունները, սակայն, կարող են վերաբերել տարբեր ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սպորտի, առողջապահական, ինֆորմատիկայի և այլն.

Քաղաքական- apellidismo (կաշառակերություն), necionalismo (որոշ ինքնավար մարզերում տիրող հատուկ իրավիճակ), filoetarra (ահաբեկչություն), yuppismo (բարձրագույն կրթությամբ և տնտեսական արտոնյալ դիրք ունեցող երիտասարդների պահվածք): Մի շարք քաղաքական գործիչներ ևս իրենց ներդրումն ունեն նորաբանությունների ստեղծման գործընթացում: Օրինակ՝ zapaterismo, rajoyano, zapatismo և այլն:

Տնտեսական – bancarización (բանկային ծառայություններից բնակչության հաճախակի օգտվելը), descarbonizar (ածխից կախում չունենալ), consumo oculto (էլեկտրաէներգիայի սպառում այնպիսի սարքավորումներից, որոնք անջատված են)

Սպորտային - yogailates (մկաններին առաձգականություն և ուժ հաղորդող վարժություններ), todocampista (բազմաֆունկցիոնալ խաղացող), recontra (հակահարվածի ժամանակ արված վիրավորական արձագանք), futbito (ֆուտբոլային խաղի տեսակ, յուրաքանչյուր խմբում հնգական խաղացող, որտեղ դաշտի և դարպասի չափսերը նման են ձեռքի գնդակի չափսերին), zlatanear (ուժով տիրել՝ ստեղծված հայտնի ֆուտբոլիստ Զլատան Իբրահիմովիչի պատվին), inmessionante (ինքնակատարելագործման անսահմանափակ ընդունակություն և կա-

տարյալ խաղառճ՝ նվիրված արգենտինացի ֆուտբոլիստ Մեսիին): 2010թ. Աշխարհի առաջնությունում Իսպանիայի ֆուտբոլի հավաքականի հաղթանակը սպորտային լրագրողներին ներշնչեց ստեղծել նոր եզրույթ, որը կսահմաներ ֆուտբոլ խաղալու նոր ոճը՝ tiqui-taca և այն խաղացողը, որը ցուցադրում էր այս ունակությունը՝ tiquitaquero.

Առողջապահական – Այս ասպարեզում հայտվում են բուժման, թերապիաների նոր տեսակներ, որոնք ենթադրում են նոր բառերի առկայություն՝ abrazoterapia (գրկախառնվելու թերապիա՝ արդյունավետ կերպով հաղթահարելու ընկճախտն ու մենությունը), chocolaterapia (մաշկի բարելավման նպատակով շոկոլադային դիմակով կատարվող թերապիա), vinoterapia (գինեբուժություն), abdominoplastía (որովայնի ճարպային հատվածների հեռացում՝ վիրահատական միջամտությամբ):

Ինֆորմատիկա – Editiovultafobia (Facebook-ի օգտատերերի հիվանդություն, երբ չեն ցանկանում կրկին հանդիպել և վիրտուալ շփվել իրենց համադասարանցիների կամ նախկին ծանոթների հետ), geolocalización (հեռախոսի GPS սարքավորման միջոցով մարդու գտնվելու վայրը որոշելը), infoxicación (թվային աշխարհի հետ գործ ունեցող անհատի տեղեկությամբ գերծանրաբեռնվելը), posturo (սոցանցերում օգտատերերի տարբեր դիրքերով արված նկարների գերակայությունը), ciberespacio (կիբերտարածություն՝ պայմանական միջավայր, որտեղ տեղի է ունենում տվյալների փոխանակություն համակարգչային ցանցերի միջոցով), interfaz (մարդու հաղորդակցումը սարքավորման հետ), cliquear (համակարգչի ստեղնաշարի որևէ կոճակ սեղմելու գործընթաց), emoticones (եմոցիաներ արտահայտող գրաֆիկական պատկեր):

Ազիրե Մարտինեսը տարբերակում է մամուլում նորաբանությունների ստեղծման երկու տեսակ՝ իմաստաբանական և գործաբանական: Ըստ Ազիրեի՝ երբեմն լինում են այնպիսի իրավիճակներ, երբ իմաստաբանական անհրաժեշտությունը ստիպում է նոր եզրույթ փնտրել: Այս երևույթը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ունենք նշանակիչ, որը գուրկ է նշանակյալից: Այսինքն՝ գաղափարը, գործողությունը, առար-

կան կամ իրավիճակը նոր են ի հայտ եկել, և անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր եզրույթ, որը մեզ կծառայի այդ նոր երևույթի նկարագրության համար:

Գործաբանական հիմնավորման դեպքում լրագրողը անհրաժեշտություն է ունենում ստեղծելու մի բառ, որը որոշակի նոր երանգ է հաղորդում արդեն գոյություն ունեցող բառիմաստին: Այդ երանգը կարող է լինել ծաղրական, մեղմացուցիչ, կոմիկական և այլն /http://www.razony-palabra.org.mx/N/N89/V89/04_Yanez_V89.pdf:

Եվ այսպես՝ պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու նոր եզրույթներ, նոր բառեր, որոնք մարդկանց հնարավորություն են ընձեռում նկարագրել նոր երևույթները: Այս երևույթի զարգացման գործում իր առանձնահատուկ դերն ունի մամուլի աշխարհը, լինի այն թվային, թե տպագիր: Մամուլը, բացի յուրաքանչյուր ոլորտին վերաբերող նյութերի տարածող աղբյուր լինելուց, իր լեզվական առանձնահատկությունների շնորհիվ հնարավորություն է ընձեռում նկարագրել իրերի արդի վիճակը, կյանքի նոր հասկացություններ, նոր գաղափարախոսություններ, ցանկացած ասպարեզին առնչվող նորություններ՝ ի ցույց դնելով նոր իրավիճակներին բառապաշարի հարմարման հնարավորությունը և լրագրողի ստեղծագործ ոգին: Շատ հաճախ լրագրողների՝ նորաբանություններին դիմելու առաջնային նպատակն է իրենց ստեղծած բառերի արտահայտչակա-նությամբ ընթերցողի վրա ազդեցություն թողնելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Aguirre, C.** (2013), <<Los neologismos en la prensa y en la jerga juvenil: semejanzas y diferencias>>, Antonio Ubach Medina (ed.), Madrid.
2. **García Domínguez, P., Gómez Font, A.** (1990), El idioma español en las agencias de prensa, Fundación Germán Sánchez Ruipérez, Madrid, p.25.
3. **Guerrero Salazar, S., Núñez Cabezas, E.** (2002), Medios de comunicación y español actual, Aljibe, Málaga, pp.117-119.

4. **Pascual José, A.**, El placer y el riesgo de elegir. Sobre los recursos derivativos del español, lección inaugural del curso 1996/1997, Universidad de Salamanca.
5. **Աղայան, Է. Բ.** (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան հրատ. Երևան, էջ 1524.
6. **Եզեկյան, Լ. Կ.** (1999), Հայերենի գործառական ոճերը, Երևանի համալսարանի հրատ., էջ 65.
7. **Նազարյան, Ա. Հ.** (1993), Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան. Երևան, Ապոլոն հրատ.:
8. http://cvc.cervantes.es/ensenanza/biblioteca_ele/asele/pdf/14/14_0089.pdf
9. http://www.razonypalabra.org.mx/N/N89/V89/04_Yanez_V89.pdf
10. <http://www.nexofin.com/notas/417092-siete-reglas-de-oro-a-la-hora-de-comer-n/>
11. <https://elrobotpescador.com/2014/11/02/impresionantes-declaraciones-de-putin-hablandole-claro-a-las-elites-occidentales/>
12. <http://www.qhuboibague.com/blog/ladron-huyo-y-se-fracturo/>
13. <http://www.animalpolitico.com/2013/11/estados-ceden-internos-el-control-de-5-carceles-en-un-ano/>
14. <http://www.elnuevodiario.com.ni/nacionales/369279-perdon-abortos-no-une-posiciones/>
15. <http://www.elrincondelcuidador.es/blog/cambios-de-comportamiento-en-ancianos-con-demencia-como-reaccionar/>
16. <http://www.elespectador.com/noticias/bogota/evitar-le-roben-prima-articulo-497975>
17. <http://ecodiario.economista.es/elecciones-2015-20D/noticias/7206781/12/15/Hay-pinza-entre-Rajoy-e-Iglesias-Nuestro-enemigo-es-el-PSOE-nuestro-rival-Ciudadanos.html>
18. <https://glissoire.wordpress.com/2012/10/21/innovacion-superlativa/>
19. <http://www.europapress.es/nacional/noticia-podemos-cierra-filas-niega-divisiones-estrategia-negociaciones-psoe-20160309182649.html>
20. <http://www.elmundo.es/loc/2016/12/27/58626ab7e5fdea1a5c8b45b3.html>
21. <http://www.europapress.es/murcia/noticia-colaborador-hospital-mesa-castillo-advierte-facilidad-ebola-puede-acceder-cualquier-pais-20140808133634.html>
22. http://elpais.com/diario/2009/02/16/galicia/1234783090_850215.amp.html
23. <http://www.vozpopuli.com,26.06.2016>
24. <http://www.elpais.com.uy/economia/noticias/pablo-ferreri-apunto-confianza-audacia.html>
25. <http://www.elpais.com.uy/informacion/universidad-republica-pretende-aumento-salarial.html>

26. http://elpais.com/elpais/2015/03/27/opinion/1427485575_641361.html
27. http://economia.elpais.com/economia/2016/09/28/actualidad/1475057329_738767.html
28. http://elpais.com/elpais/2014/09/17/buenavida/1410948875_792545.html
29. http://elpais.com/diario/1994/12/08/internacional/786841219_850215.html
30. <http://www.elperiodicomediterraneo.com>